Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի

11-րդ դասարան

Տևողությունը՝ 2 ժամ 30 րոպե

Հանձինս կենդանի բնության՝ մարդուն ուղեկցում է իմաստուն, բարի մի ուսուցիչ, **որ** ամեն պահի նրա կողքը լինելով՝ տարիների ընթացքում սովորեցնում է, ուղղորդում:

Ասում են՝ նավորդները **համոզված** են, երբ ճայերը կտրուկ դադարեցնում են իրենց թռիչքն ու անհանգիստ ոստոստում ծովափում, ուրեմն **ուր որ է՝** ահեղամռունչ փոթորիկ է սկսվելու: Իսկ ծիծեռնակների բարձրաթռիչ սլացքը նշան է արևոտ ու պայծառ **եղանակի**: Հայտնի է, որ մինչև կեսգիշեր տքնող, ժրաջան մրջյունները, նախազգալով վերահասու աղետը, շտապ կերպով փակում են իրենց բների մուտքերը: **Ըստ ականատեսների՝** հանքափորները դեղձանիկներին իրենց հետ հանքախորշ են իջեցնում. պարզվել է վերջիններս, հոտի նկատմամբ զգայուն լինելով, իրենց բարձր գեղգեղանքով տեղեկացնում են վտանգավոր գազերի առկայության մասին: Ժամանակն է հիշել նաև հոտառու օձաձկներին, որոնք ջրում ակնթարթորեն զգում են ալկոհոլի անգամ նվազագույն քանակությունը, **ինչին** արձագանքում են անհանգիստ խայտանքով: Վարժեցրած շներն էլ ահա օգնում են երկրաբաններին. ընդերքում՝ նույնիսկ յոթը մետր **իջվածքում** նրանց հաջողվում է հայտնաբերել **ծծմբարջասպի՝** (ծծմբարջասպը նույն ծծմբապղինձն է) օգտակար այդ հանածոյի ակունքները:

1. Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով կետադրական սխալները, և լրացրո՛ւ բաց թողնված տրոհության նշանները:
2. Բնագրից դո՛ւրս գրիր սխալ գործածված բառերն ու բառաձևերը՝ դիմացը նշելով ճիշտ տարբերակը:
3. Գրի՛ր բնագրում ընդգծված բառերի խոսքիմասային արժեքներն ու շարահյուսական պաշտոնները:
4. Ներկայացրո՛ւ *մինչև, անգամ, էլ, իսկ, որ* բառերից յուրաքանչյուրի խոսքիմասային տարարժեքությունները:
5. Բնագրից դուրս գրի՛ր բաղադրյալ ստորոգյալները. նշի՛ր ստորոգելիներից յուրաքանչյուրի խոսքիմասային պատկանելությունը:
6. Դո՛ւրս գրիր բնագրում գործածված բարդածանցավոր ածականները՝ ընդգծելով արմատը՝ մեկ, ածանցը՝ երկու գծով:
7. Գրի՛ր 4 պարզ նախադասություն գործիական հոլովի տարաբնույթ կիրառություններով՝ յուրաքանչյուր անդամի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը:
8. Կազմի՛ր նախադասություն տրված կաղապարով. Որոշիչ, ենթակա, բացահայտիչ, ժամանակի պարագա, ստորոգյալ, հատկացուցիչ, անուղղակի խնդիր:
9. Գրի՛ր շարադրություն «Հանուն իմ երկրի» վերնագրով (առնվազն երկու էջի սահմաններում):